Գ.Ա. 11.7.245

ԱԶԱՏ-ՎԵՇՏՈՒՆԻ

ՍՐՏԻՍ ԼԱՐԵՐԷՆ

—ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ—

ИЗЪ СТРУНЪ СЕРДЦА

—Стихотворенія—

Տպարան Բարեգործական Բաղնիս
գր. Էրիվանցոնց, Բաքու.
1915

891.99
Ա-75

Арм.
2-4052а.
.99
75
2 MAR 2011
2-4052а

ԱԶԱՏ – ՎՇՏՈՒՆԻ

Азат Вишуни

ՍՐՏԻՍ ԼԱՐԵՐԷՆ

—ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ—

ИЗЪ СТРУНЪ СЕРДЦА

—Стихотворенія—

ИНВ. № 40589

Տպարան Երեւանցեանի, Բաքու.
Типогр. Эриванцова, Баку.
1915

12.08.2012
57716

40021-63

ԻՄ ԵՐԳԸ

Աղջիկ մը անտես սրտիկս բացաւ,
Հրդեհեց, անցաւ...
Կարօտը մրկեց լարերը սնդուս
Երազուն հոգուս.
Լարը սրսկեց քնքուշ մեղեդի
Լճի, եղէգի...

Լճակը մանուկ՝ հէքեաթով կրկին
Շղարշեց ափը.
Եղէգը դալար ճուլեց իր կրծին
Ջիւնէ կարապը...

Կարապը թռաւ,—կարօտ բարձունքի,
Եղէգի գրկէն.
Երգս երգելով,—ժպտի, արցունքի,
Ծաւի երկնքէն...

Երգս կարապի կտուցէն դողդոջ
Անձրևեց վարը.
Փոթորիկ, թախիծ, ժպիտ ու բողբոջ
Լեցուց աշխարհը...

ՔՆԱՐԻՍ

Rien ne nous rend si grands
q'une grande douleur.
Les plus désespérés sont
les chants les plus beaux,
Et j'en sais d'immortels
qui sont de purs sanglots.

A. de Musset

Լքումի պատէն
Կախեցի քեզի...

Սրտիկս արդէն
Երազ—բեհեղի,
Սէր—ժպտի անտես
Կարօտ էր այնպէս.

Ու փախայ հեռուն...
Եւ ծովը եռուն
Թարմ կեանքի ծարաւ,
Քշեց ինձ տարաւ
Հեռուները վէս
Հաճոյքի պէս-պէս։

Եւ մոռցայ կրկին
Մեր երդը նախկին...

Ահա կը դառնամ վերստին քեզի
Տանջուած, վիրաւոր.
Բաց գիրկդ քնար, դու հին օրերուս
Ընկեր սրտակից.

Սիրտս նորաբաց՝ նետերէն լեղի
Խոցուած, թունաւոր,
Թող փարուէ կրծքիդ, վշտաբեկ, անյոյս,
Ամբարած թախիծ։

Եկուր, որ պոկեմ սիրոյ նուրբ լարը
Հուր—լանջքէդ քնքուշ.
Ալ՛ մի երազեր ժպտուն աչքերու
Խայթը քաղցրածոր.
Գրկենք, ջան քնար, անբզդայ քարը,
Արտասուենք զգուշ,
Քան թէ կնոջ հետ փետտել վարդերու
Թերթերը բոսոր...

Ժպտի, վայելքի
Մեր տիրան է միշտ խորթ.

Վիշտը ծովայորդ
Փոխան սէր—փառքի.
Քրքիջը անհոգ,
Գիրկը սիրածի
Թողին մեզ. անոք
Օրերն են լացի,
Լացուց մեզի լոկ
Սիրտը կանացի...

Մենք շղթայուած ենք, իմ քնար անգին,—
Տանջանքի օղով յաւիտեան իրար.
Մեր մայրը մէկ է, խնկաբոյր կեանքին
Խորթ ենք առ յաւէտ,—անտուն ու մոլոր։

Դու հետս ծնար մօրս արգանդէն,

Այնպէս զգայուն, այնպէս մտերիմ.
Եւ մենք քոյր—եղբայր կնքուած բախտէն,
Ընկանք մարդոց մէջ, գցուած, ոխերիմ...

Հեռաստաններէն վէրք—երգ իմ բերեր
Փոթորկոտ, տխուր.
Ես քեզ կը պատմեմ դու բարձր երգէ
Թախծոտ բայց հպարտ.
Թև-թևի տուած սլանանք վերե՞ր,—
Երկինքը լազուր,
Ուր՝ քոյր արևը լոյսով պիտ՛ հերկէ
Լարերդ վհատ...

* * *

Երբ Մայիսին՝ հովը օրրէ,
Օրօր ըսէ վարդերուն.
Վերջալոյսին սիրերգ թորէ
Ստուերներէն երերուն.
Փնջէ, սիրուն,
Շուշանը վառ,
Կարօտս ան...

Երբ լուսընկան կոյս, ոսկերես,
Լողայ սիրած եթերէն.
Ու պարմանի տարփանքին հեղ
Քնէ սիրոյ երգերէն.
Թող որ բերեն
Քոյ վարդ—հոգուն
Օրօր ու քու...

Երբ աշունը մահասարսուռ
Երգէ վերջին մեղեդին.
Տերևները խամրած ու լռւռ
Իյնան, քօղեն թաց գետին.

Շիրմիս՝ յետին
Եկուր այցի
Առանց լացի...
Եւ երգէ ցած
Օրերն անցած...

ՓՐՓՈՒՐ–ՀԱՐՍԸ

Մի կղզի կայ ծփուն ծովում
Հագած երազ վերարկու.
Կարապները ազատ լողում
Նրա ափին ահարկու։

Կղզու վրայ մշտագարուն,
Ջնաշխարհիկ մի հիւրի.
Մերկ, թափանցիկ և անանուն,—
Հարսը բիւրեղ փրփուրի։

Սլանում է նա հերարձակ
Զեփիւռի հետ ծաղկաբոյր.
Վերջալոյսին՝ ծովուն արձակ
Տալիս անմեռ մի համբոյր։

Սիբարորբոք ծովը հևում
Մերկութիւնից լուսածին.
Կապոյտներից քող է ձևում
Ծածկում կուրծքը սիրածին։

Լոյսը կաթում վարդ—շրթերից
Ալեակների մոյգ ծոցում.
Հեռու, հեռու սև ափերից
Էն Լոյս-Զրէն եմ ծծում...

ԱՆՑԱ՛Ի ԳԱՐՈՒՆ

Գարուն չկա՛յ, անցա՛ւ գարուն,
Վարդն ու սմբուլն ա՛լ թոշնան.
Սիրտս կուլայ արցունք—արուն
Վերջալոյսին՝ մութ աշնան։

Ափսո՛ս, սիրտս կարօտ մնաց
Սև աչերուդ երկնածին.
Դու մնացիր անփոյթ, քնած՝
Իմ գարունին, իմ լացին...

Ա՛լ մի նայեր, անցա՛ւ գարուն,
Տենչ ու յոյզերս թոշնան.
Սիրտս կուլայ արցունք—արուն
Կեանքիս յետին մութ աշնան...

ՊԱՏՐԱՆՔ

Մենացումիս պահուն դալուկ իրիկուայ,
Սրտիս վրայ գանդակուեցան՝ ցանուցիր
Քոյր—թախիծներ պատրանքներէդ երե-
կուայ...

Եւ լսեցի հեծեծանքներ կիթառի,
Որ սգացին հոգեվարքը՝ նորածիլ
Երազներուս, անյայտութեան, դադարի։

Լուսամուտիս նեղ բացուածքէն՝ խօլական
Քրքիջներդ արտասուեցին իմ չորս դին,
Սուր ճչացին, զուր զողացին, լուռ յանգան։

Եւ զգացի որ լքուած եմ և անմաս
Հմայքներուդ, հպումներուդ խորհուրդին,

Քանի որ դու սոսկ պատրանք՝ մ'ես. միշտ
անհաս...

Մենացումիս պահուն դալուկ իրիկուայ,
Երբ կը շնչեն սէր—երազով վարդ-բարձեր,
Երբ գիշերը խոստումներով է լեցուեր.
Ինձ թողուցիր վերապրումնովը երեկուայ,
Մենացումիս սա վարկեանին իրիկուայ...

ՃԱՀԻՃԻ ՄԷՋ

Անմեղ թռչնիկը սպիտակ, աղուոր,
Բացաւ իր թևեր.
Ճախրեց, սլացաւ անփոյթ, մենաւոր,
Աշխարհէն դէպ վեր։

Կեանքի մարմաջով, կարօտով անծայր
Երգեց սէր, լուսին.
Ու տենչաց գրկել աստղերը պայծառ,
Եւ ձուլուել լոյսին...

Մարդիկ զայն տեսան, նետերով կրքի
Զարկին բաց թևին.
Ազատ թռչնիկը երաց—երկնքի՝
Դէպի վար բերին...

ԱՄԷՆ ԳԻՇԵՐ

Ամեն գիշեր,
Հին-հին յուշեր
Երբ թափառեն իմ հոգում.
Անթիւ վշտեր,
Սուր-սուր փշեր
Սիրտս տեղիցը պոկում.

Որպէս փրփուր
Երկնքի քոյր,
Ստուերներում դողդոջուն.
Սևեր հագած,
Աչերը թաց,
Ներս է գալիս, ինձ կանչում։

Մնաբիս կից,
Նա՝ սրտակից,

40021-67
ՊԵՏ. ԿԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ

Ինձ փայփայում լալագին.
Մեղմիկ, տրտում
Ինձ լուռ գրկում,
Սեղմում, սեղմում իր կրծքին։

Պատմում, պատմում
Ինձ, անհատնում
Նուշ—հէքեաթներ ապագայ.
Յանկարծ անտես
Երազի պէս
Հեռանում երբ քունս գայ։

Ամեն գիշեր,
Հին-հին յուշեր
Երբ թափառեն իմ հոգում.
Անթիւ վշտեր,
Սուր-սուր փշեր
Սիրտս աեղիցը պոկում...

VANN—HAROUT-ին

Կարիճ նաւաստին
Ովկեանի վրայ,
Փոթորկի բախտին
Յառաջ կը սուրայ։

—Հէյ, կա՛ց որ ասեմ,
Յանդուգն ուղևոր.
Երկինքը,—նսեմ,
Շուրջդ,—ահաւոր։

Շատերը գացին
Ու յետ չ'դարձան.
Աստղեր չ'լացին,
Գիշերը,—անձայն...

Շատերը Երէկ,
Ափսոս, դու էլ Վաղ.
Նաւակդ անդեկ
Երերուում, աւաղ։

Դարձէ՛ր, նաւաստի՛,
Ծովը — բարբարոս.
Տեղդ չես հասնի,
Ուղին, — անփարոս...

Հողմեր բարձրացան,
Նաւակը, — անհետ.
Կոհակներ դարձան,
Եւ նա չ'եկաւ յետ...

ԶԱՆԳԱԿՆԵՐ

Կէս գիշերին՝ անապատէն լայնածիր
Կ'անցնէ յոյսիս կարաւան...
Անեղերքի ստուերին մէջ, ցան ու ցիր
Հեռու լոյսեր կ'երևան...

Եւ կը դիտեմ անսահմանէն աւազի
Ովասիսը զմրուխտէ,
Վարագուրուած ժանեակներով երազի, —
Որ ինձ այնպէ՛ս կը դիւթէ։

Կոյս լռութեան գրկին մէջը, արծաթէ
Զանգակները կը զընգան.
Լուրթ եթերէն ճամբուս վրայ կը ծաթէ
Հէքեաթներու լուսընկան։

Զըր՜ընգ, զըր՜ընգ... ձայնը անուշ զըզզուն
Կը թրթռայ, կը մարէ.
Անէութեան մէջը հոգիս է զեղուն
Երկունքներով գոհարէ։

Եւ կը քալեմ կարաւանիս զընգոցով
Անապատէն անշուշան
Դէպի հեռուն, անուրջներուս լոյսէ ծով,—
Դէպի իմ մայր Ատրուշան...

Կէս գիշերին՝ անապատէն լայնածիր
Կ՚անցնէ յոյսիս կարաւան.
Անեղերքի ստուերին մէջ, ցան ու ցիր
Հեռու լոյսեր կ՚երևան...

Ա՛Լ ՉԿԱ՜Յ

Վերջալոյսի հնքը յետին,
Այնպէս կամաց
Թռաւ, գնաց
Ու մահ սփռեց վարդի թերթին...

Եւ հոգիս անմտմունջ,
Սրտիկս անըզգայ.
Ոչ գգուանք, ոչ ջերմ շունչ
Աղջկայ...
Ո՞ւր է, ո՞ւր, հուր-անուրջ,
Ա՜խ, չկա՛յ։
—Ա՛լ չկա՛յ, ա՛լ չկա՛յ...

Օ՜, ԷՍ ԳԻՇԵՐ...

Օ՜, էս գիշեր, ո՜, էս գիշեր,
Անզարդ, անմարդ, ահաւոր.
Սև սրտումս մեռած յուշեր,
Քայլում եմ մէն-մենաւոր։

Հոգիս սառած սև պատանքում,
Անճար, անչար և աղօտ.
Գերեզմանոցն եմ շտապում
Ես ճամբէքից անծանօթ։

Ալ երազներ լաւ օրերի,
Ոսկի յոյզեր մանկական,
Կորած, խամրած, անդառնալի
Գարունիս հետ դիւթական.

Ես ձեզ թաղեմ լռւռ, անվրդով
Նոճիների շըւաքում.
Տերևթափի մրմռւռ—երգով,
Գետի օրօր-նուագում։

Օ՜, էս գիշեր, ո՜, էս գիշեր,
Անզարդ, անմարդ, ահաւոր.
Սև սրտումս մեռած յուշեր,
Քայլում եմ մէն-մենաւոր...

* * *

Եթերը կապեց եռանգոյն բեհեզ
Մարող իրիկուայ ցոլքերով վերջին.
Դարձեալ իմ սիրտը հմայքով անտես,
Տենչում է գրկել չ՛գիտեմ ինչին...

Մանիշակ լճում ցանեցին գոհար,
Անտառը քօղեց մութը սիրացող.
Առուակն է երգում մեղմիկ, դողահար,
Գնում գգուելու սիրածին լացող։

Ծաղկունք ննջեցին արցունք—անրջում,
Սարսուռ ու շշուկ ծնուեց անմեկին.
Անքուն թփերից մի ձայն է հնչում,
Մի քնքուշ ժպիտ կանչում է մէկին։

Եթերը կապեց եռանգոյն բեհեզ
Մարող իրիկուայ ցոլքերով վերջին.
Դարձեալ իմ սիրտը հմայքով անտես,
Տենչում է գրկել չ՛գիտեմ ինչին...

ԴԻՊԻ ԾՈՎ

Ծովն է փռուեր մեղմ կամ վրդով
Կնոջ մը պէս.
Մերթ ալեյոյզ, մերթ երկնաթով,
Պչրոտ ու վէս։

Միշտ կը կանչէ, ինձ կը կանչէ
Երգով մ՛աղուոր,—
Գրկին մէջը յորդ—ճաճանչէ,
Խորհրդաւոր։

Գաշտնաշունչ ծով, իմ ծնող ծով,
Բաց ինձ, բեհեզ
Թևերդ բաց, մանուկ իղձով
Կուգամ դէպ քեզ։

Յորձանքներուդ լեռնակուտակ
Թափէն փարթամ,
Եւ յարածուի թևերուդ տակ
Լող տամ, երթամ...

Երթամ, երթամ քո երերուն
Քոյր—ծփանքով
Դէպի պայքար, ոսկի հեռուն,
Անյայտի՝ քով...

Գաղտնաշունչ ծով, իմ ծնող ծով,
Բաց ինձ, բեհեղ
Թևերդ բաց, մանուկ իղձով
Կուգամ դէպ քեզ։

ԴԷՊԻ ԱՆՀԱՍ

Ես կը սիրեմ արահետներ նեղանցուկ,
Դիգերումներ դէպ հեռուն.
Յուսաբեկում, ժպիտ, հառաջ ու արցունք,
Եւ գաղտնիքներ վէս, եռուն...

Հոգիս մատղաշ յար ծարաւի գեղեցկին,
Կը թափառէ անկայան.
Պապակումով, երազներով անմեկին,
Ու միշտ կարօտ վառ—գարնան։

Կուգամ, կուգամ աստուած—ձայնիդ ես հլու
Ծործորներէն յաւերժի.
Ու կը ճախրեմ ցնորքներովս տղու
Հասնելու հոն, վերը, քեզի...

Դու մ'երևար, միշտ խաբէ ինձ, կաց անտես
Հմայքովդ դիւրաբեկ.
Որ միշտ երգեմ, ու սաւառնեմ դէպի քեզ,
Բայց չ'հասնեմ քեզ երբէք...

Ես կը սիրեմ արահետներ նեղանձուկ,
Դեգերումներ դէպ հեռուն.
Յուսաբեկում, ժպիտ, հառաջ ու արցունք,
Եւ գաղտնիքներ վէս, հեռուն...

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ ՍՍՀ
Ա. ԻՄ Ա. ԻՍԱԿՅԱՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իմ երգը 3
Քնարիս 4
*** 9
Փրփուր-հարսը 11
Անցաւ գարուն. 13
Պատրանք 14
Ճահիճի մէջ 16
Ամէն գիշեր 17
Vann-Harout-ին 19
Զանգակներ 21
Ալ՛ չ'կայ... 23
Օ՜, էս գիշեր... 24
*** 26
Դէպի ծով 27
Դէպի անհաս 29

---

20 ԿՈՊ.